

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի հանրային լսումների

Հ/հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1	Նախագծի իրազեկումը	Հանրության իրազեկումը սահմանված կարգով կատարվել է 19.02.2020թ համայնքապետարանի պաշտոնական կայքով՝ www.vanadzor.am , ինչպես նաև հայտարարությունը և որոշումները փակցվել են համայնքապետարանի մուտքին և տարածվել են սոցիալական ցանցով
2	Հանրային քննարկման մասնակիցներ	<p>Համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Արտյոմ Գրիգորյանը</p> <p>2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը</p> <p>3. Համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր՝</p> <ul style="list-style-type: none"> - Լիլյա Դավթյանը - Արևհատ Հովհաննիսյանը - Սուրեն Աբովյանը - Վահե Գրիգորյանը <p>4. Վանաձոր համայնքի ավագանու անդամներ՝</p> <ul style="list-style-type: none"> - - Արևիկ Լոքյանը - Սեյրան Ղամբարյանը - Արմեն Մատինյանը - Գայանե Քալանթարյանը - Վահե Կոռյանը - Անահիտ Կարապետյանը - Սոխակ Մելքոնյանը <p>5. Համայնքապետարանի աշխատակազմի բաժինների աշխատակիցներ՝</p> <ul style="list-style-type: none"> - Հերմինե Զարմանյանը

		<p>6. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Դինարա Մխոյանը</p> <p>7. Քաղաքացիներ</p> <ul style="list-style-type: none"> - Նաիրա Կարապետյանը - Նարինե Բադայանը - Գայանե Գալարյանը - Տաթևիկ Գալոյանը - Հրաչուհի Լոռեցյանը - Բավական Մարտիրոսյանը - Գևորգ Քոթանջյանը - Էլիտա Սեֆերյան - Արբակ Սարգսյանը - Դավիթ Այվազյանը - Ռոման Մարուքյանը
3	<p>Հանրային քննարկումների մասնակցության արդյունքները</p>	<p>1. Լիլյա Դավթյանը ներկայացրեց ««Վանաձոր համայնքի «Աթլետիկայի օլիմպիական մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում, «Հրաչյա Կլեկյանի անվան թիվ 1 մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում եւ «Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանային համակարգ» ՀՈԱԿ-ի Թատերական 2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում»» ծրագիրը:</p> <p>Արդյունքում՝ «Աթլետիկայի օլիմպիական մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց»-ում կունենանք նորակառույց վարժասարքերի մարզադահլիճ, մարզագույքի ձեռքբերում, մարզասրահի ռետինապատ հատակի փոխարինում նոր ծածկույթով, դրսի վազքուղիների ասֆալտապատում եւ 120մ ռետինապատում, պարսպի կառուցում, երկաթյա դարպասի կառուցում:</p> <p>Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն և հնչեցին լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցեր:</p> <p>Ներկայացված առաջարկություններ.</p>

		<p>Վահե Կոռյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի շենքը ևս ներառել ծրագրի մեջ: <p>Սեյրան Ղամբարյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Ծրագրերում ընդգրկել գերեզմաններ տանող երկրորդ՝ այլընտրանքային, ճամապարհի հիմնանորոգումը: <p>Տեղի ունեցան ներկայացված առաջարկների վերաբերյալ քննարկումներ:</p> <p>2. Լիյա Դավթյանը ներկայացրեց «Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ» ծրագիրը:</p> <p>Ծրագրով նախատեսվում է Տիգրան Մեծի 34/1, Տիգրան Մեծի 34/2, Տիգրան Մեծի 34/3, Տիգրան Մեծի 34/4, Տիգրան Մեծի 34/5, Տիգրան Մեծի 59, Տիգրան Մեծի 77, Վարդանանց փ. 23, Վարդանանց փ 82, Վարդանանց փ 84, Վարդանանց փ 86 բարձրահարկ պանելային շենքերի էներգաարդյունավետության բարձրացում: Շենքերում էներգաարդյունավետ միջոցառումների իրականացումը, այն է՝ արտաքին պատերի ջերմամեկուսացում, շքամուտքի դռների եւ պատուհանների փոխարինում, տանիքի ջերմամեկուսացում:</p> <p>Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն և հնչեցին լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցեր:</p> <p>Ներկայացված առաջարկություններ.</p> <p>Ռոման Մարուքյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Երրորդ մաս թաղամասում ևս կան ծրագրում նշված չափանիշներին համապատասխանող շենքեր: Դրանք քաղաք մտնող փողոցի վրա են, հետևաբար առաջարկություն հնչեց փոխել շենքերի ցանկը՝ ընդգրկելով
--	--	---

		<p>նաև այդ շենքերը:</p> <p>Գևորգ Քոթանջյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Կենտրոնական հատվածի շենքերի փոխարեն ընդգրկել ծայրամասերի շենքերը: <p>Արբակ Սարգսյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Քանի որ Վանաձորում կան սոցիալապես անապահով բնակիչներ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն լուծել բնակարանների ջեռուցման խնդիրը, առաջարկվեց շենքերի ցանկն ընտրել՝ հաշվի առնելով այդ հանգամանքը: <p>Տեղի ունեցան ներկայացված առաջարկների վերաբերյալ քննարկումներ:</p> <p>3. Լիլյա Դավթյանը ներկայացրեց «Վանաձոր համայնքի «Շառլ Ազնավուրի» անվան այգու հիմնանորոգում, Տարոն-2 եւ Տարոն-4 այգիների կառուցում» ծրագիրը:</p> <p>Ծրագրով նախատեսվում է «Շառլ Ազնավուրի» անվան այգու հիմնանորոգում (2,6 հա), «Տարոն-2» այգու կառուցում (0,2հա), «Տարոն-4» այգու կառուցում (1 հա): «Շառլ Ազնավուրի» անվան այգում ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2 փուլով: 1-ին փուլ՝ լուսավորության համակարգի արդիականացում, կանաչապատում, արահետների ծածկույթի վերանորոգման, սմարթ նստարաններ, աղբամանների տեղադրում, եզրաքարերի փոխում, ջրավազանի եւ շատրվանների վերականգնում, լուսաձայնային երաժշտական համակարգ: 2-րդ փուլ (մասնավոր ներդրում)՝ սահադաշտի կառուցման աշխատանքներ, ժամանակակից խաղահրապարակների կազմակերպում, բացօթյա բեմ (էստրադա): Տարոն-2 եւ Տարոն-4 թաղամասերում այգիների կառուցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծայրամասային այս թաղամասերում չկան այգիներ,</p>
--	--	---

		<p>պուրակներ, ինչպես նաև հանգստի գոտիներ: Նախատեսվում է տարածքի բարեկարգում, ամֆիթատրոնի եւ սիզամարգերի կառուցում, կանաչապատում, նստարանների եւ աղբամանների տեղադրում, լուսավորություն:</p> <p>Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն և հնչեցին լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցեր:</p> <p>Առաջարկություններ չներկայացվեցին:</p> <p>4. Լիլյա Դավթյանը ներկայացրեց «Վանաձոր համայնքի Չուխաջյան, Լավվարի փողոցների եւ կենտրոնական մայրերի կապիտալ նորոգում» ծրագիրը:</p> <p>Հիմնանորոգման ենթակա փողոցներն են՝ Չուխաջյան, Լավվարի փողոցները, մայրերն են՝ Նժդեհի փ., Տ. Մեծից դեպի Բանակի փ., Մխիթար Գոշ փ., Տերյան փ., Վարդանանց փ.: Ծրագրի արդյունքում կունենանք տրանսպորտային ենթակառուցվածքների բարեկարգ եւ գրավիչ վիճակ, տրանսպորտային միջոցների եւ հետիոտների համար ճանապարհային երթուղիների անվտանգության բարելավում, ոչ կենտրոնական թաղամասերի բնակիչների համար զբոսանքի վայրեր, փողոցներին հարակից գործող բիզնեսների աճի, նոր բիզնեսների համար գրավիչ միջավայր, տուրիզմի զարգացում:</p> <p>Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն և հնչեցին լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցեր:</p> <p>Ներկայացված առաջարկություններ.</p> <p>Արմեն Մատինյանը և Վահե Կոռյանն առաջարկեցին՝</p> <ul style="list-style-type: none"> • Ընտրված մայրերը փոխարինել Տիգրան Մեծի պողոտայի մայրերով, քանի որ այն քաղաքի գլխավոր պողոտան է, հետևաբար առավել բանուկ է, ուստի հարմարավետ և գրավիչ դարձնելու անհրաժեշտություն կա:
--	--	--

		<p>Գայանե Քալանթարյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Գ. Նժդեհի փողոցի հարակից մայրերի հիմնանորոգումը կատարել մինչև հոգենյարդաբանական դիսպանսեր: <p>Դավիթ Այվազյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Տիգրան Մեծի ամենախիտ երթևեկն ունեցող հատվածներում անցումների միջակայքում ընկած հատվածների ճամփեզրերին տեղադրել գովազդային կամ Վանաձորի տեսարժան վայրերը ներկայացնող վահանակներ, որոնց շնորհիվ կկասեցվեն քաղաքացիների կողմից չնախատեսված վայրերում փողոցը հատելու դեպքերը: <p>Արբակ Սարգսյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Մայրերը հիմնանորոգելիս՝ հաշվի առնել դրանց ներառականության բաղադրիչը, որպեսզի դրանք հարմարեցված լինեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար: <p>Նաիրա Կարապետյանն առաջարկեց՝</p> <ul style="list-style-type: none"> • Մայրերի ասֆալտապատումը փոխարինել սալիկապատումով
--	--	--

Աշխատակազմի քարտուղար

Արթուր Օհանյան